

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
մարտի 10-ի N 294 - Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:
2. Հիմնադրամն իր գործունեության ընթացքում դեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
3. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր), որի լիազորված մարմինն է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը:
4. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և (կամ) օտարերկրյա պետություններում:

5. Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով), դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև այլ անհատականացման միջոցներ:

**6. Հիմնադրամի անվանումն է՝**

1) հայերեն լրիվ՝ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամ.

2) ռուսերեն լրիվ՝ Փոнд “Национальный центр по урегулированию законодательства”.

3) անգլերեն լրիվ՝ “National Centre for Legislative Regulation” Foundation.

4) հայերեն կրճատ՝ ОЧУՀ.

5) ռուսերեն կրճատ՝ ФНЦУЗ.

6) անգլերեն կրճատ՝ NCLRF:

7. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան,  
Սարյան 22, 0002:

8. Հիմնադրամի շահառուներ են Հայաստանի Հանրապետության կառավարությունը,  
հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմերի աշխատողները, միջազգային  
կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա առևտրային ու ոչ  
առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և քաղաքացիները:

9. Հիմնադրամը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման-  
ված կարգով ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, հիմնարկներ, ինչպես նաև՝  
հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ, որոնք գործում են հիմնա-  
դրամի անոնից՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած կանոնադրություն-  
ներին համապատասխան:

10. Հիմնադրամը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտա-  
վորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անոնից ձեռք բերել և  
իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականու-  
թյուններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

11. Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվները բացելու Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

12. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չի հետափնդում: Տարբեր աղյուրներից, ինչպես նաև իր տնտեսական գործունեությունից ստացված միջոցներն օգտագործվում են միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

13. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ հիմնադրամը պատասխանատվություն չի կրում հիմնադիրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև հիմնադրամի պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

## II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

14. Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

1) օրենսդրական դաշտի բարեկավմանը և դրա արդյունավետության բարձրացմանը նպաստելուն ուղղված՝

ա. Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրին և շուկայական տնտեսության զարգացմանը Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում առկա խոչընդոտող դրույթների վերացման, պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարեկավման և պարզեցման, այս ոլորտներում գործող նորմատիվ իրավական ակտերի գույքագրման, դասակարգման աշխատանքների, ինչպես նաև կարգավորող իրավական ակտերի կրճատման, պարզեցման, մասնավորապես, դրանցով սահմանված տնտեսապես ոչ արդյունավետ, աշխատատար, ծախսատար և աննպատակահարմար մեխանիզմների կրճատմանն ուղղված առաջարկությունների փաթեթի, այդ թվում՝ դրա կիրառման արդյունքի ֆինանսական գնահատականի, նախապատրաստումը և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելը,

թ. կարգավորման ազդեցության գնահատման նոր փորձարարական համակարգի մշակումը, փորձարկումը և ներդրումը՝ ներառյալ խնդրի ձևավորումը, դրա հիմնավորվածության ապացուցումը, այլընտրանքային տարբերակների սահմանումը, դրանց հետ կապված ծախսերի և օգուտների հաշվարկումը, ինչպես նաև ազդեցությունների հաշվարկման նոր մեթոդաբանության փորձարկումը,

գ. հանրային և մասնավոր հատվածի շահառուների հմտությունների և կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացումը (վերապատրաստումների և դասընթացների, համաժողովների, սեմինարների, քննարկումների կազմակերպումը),

դ. սույն կետի 1-ին ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված գործառույթների իրականացմանն ուղղված մեթոդաբանական և ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակումը և տարածումը,

ե. սույն կետի 1-ին ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված գործառույթների իրականացմանն ուղղված գործունեության համար անհրաժեշտ նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացումը.

2) պետական կառավարման որակի և դրա արդյունավետության բարձրացմանը նպաստեղուն ուղղված՝

ա. պետական կառավարման համակարգի ուսումնախրությունը, դրա գործառույթների և կազմակերպական կառուցվածքի հստակեցմանը վերաբերող առաջարկությունների նախապատրաստումը, որոնք ուղղված են պետական կառավարման արդյունավետության և արտադրողականության աճի բարձրացման ապահովմանը,

թ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմնների գործառույթների ուսումնախրությունը, այդ մարմնների գործառությունների հստակեցման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, որոնք ուղղված են տեղական կառավարման արդյունավետության և արտադրողականության աճի բարձրացման ապահովմանը,

գ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների հմտությունների և կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացումը (վերապատրաստումների և դասընթացների, համաժողովների, սեմինարների, քննարկումների կազմակերպումը),

դ. սույն կետի 2-րդ ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված գործառույթների իրականացմանն ուղղված մեթոդաբանական և ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակումը և տարածումը,

ե. սույն կետի 2-րդ ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված գործառույթների իրականացմանն ուղղված գործունեության համար անհրաժեշտ նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացումը:

### III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

15. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

16. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

17. Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շարժական և անշարժ գույք, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

18. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

1) հիմնադրի կամավոր ներդրումները.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամական մուտքերը.

3) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները.

4) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

5) դրամաշնորհները.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

19. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձի և, հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված, փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի հիմնադիրը, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները սույն կանոնադրությամբ նպաստեաված շահառուներ են:

#### IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) հիմնադրելու մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

5) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու նրանց մասնակիցը.

6) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքելու պայմանագրեր.

7) իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն:

21. Հիմնադրամը կարող է գրաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, եթե դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

22. Հիմնադրամը կարող է գրաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- 1) հետազոտական, տեղեկատվական, փորձագիտական, վերլուծական և խորհրդատվական աշխատանքների կազմակերպում ու իրականացում.
- 2) ուսումնամեթոդական նյութերի մշակում և դասընթացների կազմակերպում.
- 3) գործարարությանն աջակցող ծառայությունների և գործարար ծրագրերի մշակման ծառայությունների մատուցում.

4) հրատարակչական գործունեություն:

23. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար հիմնադրամը՝

- 1) ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար.
- 2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և արտերկրի հասարակական կազմակերպությունների, միջազգային տնտեսական ու ֆինանսական կառույցների, գործակալությունների և հիմնադրամների հետ:

24. Հիմնադրամը պարտավոր է՝

- 1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին ու իրականական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ  
<http://www.azdarar.am> հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային  
 ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

ա. հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը պետք է ներառի  
 տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական  
 տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակ-  
 ների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգարարձուների խորհրդի  
 անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն  
 ու ազգանունները, եթեն նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից  
 հաշվետու տարվա ընթացքում,

բ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առողջուն իրականացնող անձի  
 (առողջուրի) եզրակացությունը, եթեն հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 մին  
 դրամը.

3) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական  
 հաշվառում.

4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվու-  
 թյուններ ներկայացնել պետական մարմիններ.

5) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

## V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 25. Հիմնադրամի մարմիններն են՝

1) հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝  
 հիմնադրամի հոգարարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).

2) հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարող կառավարիչը՝ հիմնադրամի

տնօրենը:

26. Խորհուրդը բաղկացած է 5 անդամից: Ի պաշտոնե խորհրդի անդամ են համդիսանում

- 1) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարնախարարը.
- 2) Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարը.
- 3) Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի առաջին տեղակալը.
- 4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալը.
- 5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալը:

27. Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորություններն սկսվում են հիմնադրամի պետական գրանցմանը հաջորդող օրվանից: Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

28. Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ոչ քան խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցում ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ոչ քան 10 օրվա ընթացքում հիմնադրամի տնօրենը տեղեկացնում է հիմնադրիներին, խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

29. Խորհրդի իրավասությանն են պատկանում

- 1) հիմնադրամի ուազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը.

2) հիմնադրամի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

3) վերապատրաստումների վերաբերյալ հայտարարվող և անցկացվող մրցույթների մասին կանոնակարգի մշակումն ու հաստատումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) խորհրդի նախագահի, տնօրենի և սույն կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

10) սույն կանոնադրությամբ նախատեսված հիմնադրամի այլ մարմինների ձևավորումը.

11) սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխությունը, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումների ընդունումը.

12) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

- 13) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
- 14) տարեկան մեկ անգամ տնօրենի հաշվետվությունները լսելը.
- 15) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
- 16) հիմնադրամի առողջիտ իրավանացնող անձի (առողջտորի) ընտրությունը.
- 17) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.
- 18) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.
- 19) տնօրենի աշխատանքային պայմանների և տնօրենի թեկնածուի նկատմամբ պահանջների սահմանումը.
- 20) իր կազմից խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրությունը.
- 21) հիմնադրամի կողմից կնքվող ցանկացած գործարքի՝ ներառյալ փոխկապակցված գործարքների հաստատումը, որոնց գումարը գերազանցում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 20 տոկոսը.
- 22) հիմնադրամի բյուջեի առանձին հոդվածներում 5.0 մն դրամը գերազանցող չափով վերաբաշխում կատարելու մասին որոշումների ընդունումը.
- 23) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահած այլ լիազորությունների իրականացումը:
30. Ի պաշտոնե խորհրդի նախագահ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը: Խորհրդի նախագահը՝
- 1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, կարող է կազմավորել հոգարարձուների խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.
  - 2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք.
  - 3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
  - 4) տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) օրենքով նախատեսված դեպքերում խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

31. Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության դեկավարման բոլոր հարցերը: Հիմնադրամի տնօրենը՝

1) կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը.

2) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

3) ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

4) գործում է առանց լիազորագրի.

5) տալիս է լիազորագրեր.

6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.

7) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում արտարժութային) և այլ հաշիվներ.

8) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին.

11) հիմնադրամի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգավահական պատասխանատվության միջոցներ.

12) հաշվետու է խորհրդին.

13) ընդունում է որոշում կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մինչև 20 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված գործարքներ կատարելու մասին.

14) ընդունում է որոշում հիմնադրամի բյուջեի առանձին հոդվածներում վերաբաշխում կատարելու մասին առանց խորհրդի հաստատման, սակայն ոչ ավելի, քան 5.0 մին դրամի չափով:

32. Հիմնադրամի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է գրադեցնել վճարովի պաշտոններ՝ միայն խորհրդի համաձայնությամբ:

## VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է տարեկան 2 անգամ գումարվող հերթական նիստերի միջոցով: Խորհրդի արտահերթ նիստ գումարում է խորհրդի նախագահը՝ իր կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով: Խորհրդի քարտուղարը 3 աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի արտահերթ նիստի օրակարգի և ժամկետի մասին գրավոր տեղեկացնում է խորհրդի անդամներին:

34. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայնների մեծամասնությամբ:

35. Եթե խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քոյր, ամուսու ծնող, զավակ, եղբայր և քոյր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

36. Խորհրդի նախագահի, հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեջամասնությամբ:

37. Խորհրդի անդամները կարող են նիստերին մասնակցել նաև ուղիղ հեռակապի միջոցով:

38. Խորհրդի որոշմամբ նիստերը կարող են կազմակերպվել հարցումների միջոցով՝ օգտվելով համացանցի (ինտերնետ) հնարավորություններից: Այդ դեպքում խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի օրակարգի մասին համացանցի միջոցով 10 օր առաջ տեղեկացված և 7 օրվա ընթացքում իրենց դիրքորոշումը ներկայացրած անդամների քվեարկությամբ:

39. Խորհրդի նիստերին պարտադիր մասնակցում է հիմնադրամի տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

40. Հիմնադրամի տնօրենը որոշումներն ընդունում է ինքնուրույն՝ ենեկով խորհրդի որոշումներից և հիմնադրամի շահերից:

41. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված անձինք:

42. Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են: Արձանագրությունն ստորագրում են տվյալ նիստին մասնակցող հիմնադրամի մարմնի բոլոր անդամները:

## VII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է միայն հիմնադիրների միաձայն որոշմամբ կամ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

44. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

45. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

- 1) հիմնադրամի գույքը բավարար չէ՝ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.
- 2) հիմնադրամն իր գործունեությամբ շեղվել է՝ կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ՝ համեմ՝ հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխությունները.

4) հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ.

7) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

46. Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

47. Հիմնադրամի լուծարմամբ պայմանավորված՝ պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, եթե լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

48. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ պետական գրանցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
մարտի 10-ի N 294 - Ն որոշման

ԿԱԶՄ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՄԵՐԻ ԽՈՐՀՈԴԻ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար (խորհրդի նախագահ)
2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար
3. Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի առաջին տեղակալ
4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
մարտի 10-ի N 294 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱ-  
ՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բաժինը | Խումբը | Դասը | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական նշանով իսկ նվազեցումները՝ փակագծերում) |           |           |
|--------|--------|------|---|---|-----------|-----------|
|        |        |      |   | առաջին կիսամյակ   | ինն ամս   | տարի      |
| 1      | 2      | 3    | 4   | 5   | 6         | 7         |
|        |        |      | ԸՆԴՀԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝   |   |           |           |
| 01     |        |      | ԸՆԴՀԱՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ այդ թվում՝   | (16508.8)   | (40012.5) | (71500.0) |
|        | 01     |      | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկարյուջնետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ այդ թվում՝ | (16508.8)   | (40012.5) | (71500.0) |
|        |        | 01   | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում այդ թվում՝  | (16508.8)   | (40012.5) | (71500.0) |
|        |        |      | 14. ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի պահպանում այդ թվում՝         | (16508.8)   | (40012.5) | (71500.0) |
|        |        |      | ՀՀ կառավարության աշխատակազմ   |   |           |           |
|        |        |      | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ  | (13614.1)   | (33614.1) | (60280.8) |

| 1  | 2  | 3  | 4  | 5       | 6        | 7        |
|----|----|----|--|---------|----------|----------|
|    |    |    | -Ներգետիկ ծառայություններ  | (499.9) | (1374.8) | (2249.7) |
|    |    |    | -կոմոնալ ծառայություններ   | (16.7)  | (26.0)   | (37.2)   |
|    |    |    | -կապի ծառայություններ  | (602.2) | (1331.2) | (2206.0) |
|    |    |    | -ապահովագրական ծախսեր  | (40.0)  | (40.0)   | (40.0)   |
|    |    |    | -Համակարգչային<br>ծառայություններ  | (175.0) | (300.0)  | (500.0)  |
|    |    |    | -տեղեկատվական<br>ծառայություններ   | (35.0)  | (60.0)   | (100.0)  |
|    |    |    | -Ներկայացուցչական ծախսեր   | (134.0) | (267.6)  | (481.3)  |
|    |    |    | -ընդհանուր բնույթի այլ<br>ծառայություններ  | (252.0) | (882.0)  | (1890.0) |
|    |    |    | -Շենքերի և կառույցների<br>ընթացիկ նորոգում և պահպանում   | (87.5)  | (175.0)  | (350.0)  |
|    |    |    | -Մերենաների և<br>սարքավորումների ընթացիկ<br>նորոգում և պահպանում   | (364.5) | (677.0)  | (1177.0) |
|    |    |    | -Գրասենյակային նյութեր և<br>հազուստ  | (349.8) | (599.6)  | (999.4)  |
|    |    |    | -Տրանսպորտային նյութեր   | (204.0) | (408.0)  | (734.4)  |
|    |    |    | -Կենցաղային և հանրային սննդի<br>նյութեր  | (123.1) | (246.2)  | (443.2)  |
|    |    |    | -Հարկեր, պարտադիր վճարներ և<br>տույժեր, որոնք կառավարման<br>տարբեր մակարդակների կողմից<br>կիրառվում են միմյանց<br>նկատմամբ | (11.0)  | (11.0)   | (11.0)   |
| 11 |    |    | ՀԵՄԱԿԱՆ ԲԱԺԻՆԵՐԻՆ<br>ՉՎԱՎՈՂ<br>ՊԱՀՈՒՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ<br>այդ թվում  | 16508.8 | 40012.5  | 71500.0  |
|    | 01 |    | ՀՀ կառավարության և<br>համայնքների պահուստային ֆոնդ<br>այդ թվում  | 16508.8 | 40012.5  | 71500.0  |
|    |    | 01 | ՀՀ կառավարության<br>պահուստային ֆոնդ<br>այդ թվում՝   | 16508.8 | 40012.5  | 71500.0  |
|    |    |    | 01. ՀՀ կառավարության<br>պահուստային ֆոնդ<br>ՀՀ կառավարություն  |         |          |          |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
մարտի 10-ի N 294 - Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

|                  |  | Ցափորոշիչներ   |  |      |      |                        |   |  |  | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական նշանով իսկ նվազեցումները՝ փակագծերով) |                 |          |      |                 |                 |          |      |          |  |  |  |
|------------------|--|--|--|------|------|------------------------|---|--|--|--|-----------------|----------|------|-----------------|-----------------|----------|------|----------|--|--|--|
|                  |  | ոչ ֆինանսական ցուցանիշներ  |  |      |      | ֆինանսական ցուցանիշներ |   |  |  | առաջին եռամյակ   |                 |          |      | առաջին կիսամյակ |                 |          |      | ինն ամիս |  |  |  |
| Ծրագրային դասիցը | Անվանումը  |  |  |      |      |                        |   |  |  | առաջին եռամյակ   | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի | առաջին եռամյակ  | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի |          |  |  |  |
| 1136             | ԱԾ02   | <u>Անվանումը</u><br>ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ընթացիկ ծախսեր նկարագրությունը<br>Հայաստանի Հանրապետության կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատման, հստակեցման և պարզեցման ուղղած աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովում, նոր կարգավորվող օրենսդրական նորմերի ուսումնասիրություն, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծություն և դրանց ազդեցության գնահատում |  |      |      |                        |   |  |  |  |                 |          |      |                 |                 |          |      |          |  |  |  |
| Քանակական        | Պետության և քաղաքացիների կամ գործարար համայնքի հարաբերությունները կարգավորող մշակված իրավական ակտերի ուղեկցում մինչև ՀՀ կառավարության քննարկում և (կամ) ՀՀ Ազգային ժողով |  |  | (30) | (60) | (90)                   | 0 |  |  | 0  | 0               | 0        | 0    |                 |                 |          |      |          |  |  |  |
| Որակական         | Պետական կարգավորման հարցերով պետական մարմինների հետ գործարարների շփմանն առնչվող ծախսերի կրճատում 50% և   |  |  | -0.3 | -0.3 | -0.3                   | 0 |  |  | 0  | 0               | 0        | 0    |                 |                 |          |      |          |  |  |  |

|   |   |  |      |       |       |   |            |            |            |
|---|---|--|------|-------|-------|---|------------|------------|------------|
|   | ավելի   |  |      |       |       |   |            |            |            |
| Ժամկետայնության   | Տարվա ընթացքում   |  | 0    | 0     | 0     | 0 | 0          | 0          | 0          |
| Քանակական   | Նոր մշակվող նորմատիվ կարգավորումներ պարունակող իրավական ակտերով սահմանվող կարգավորումների ազդեցության գնահատում |  | (55) | (110) | (165) |   | 0          | 0          | 0          |
| Որակական  | Մշակված չէ  |  |      |       |       |   |            |            |            |
| Ժամկետայնություն  | Տարվա ընթացքում   |  |      |       |       |   |            |            |            |
| Մատուցվող ծառայությունների վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)   |   |  |      |       |       |   | (16,508,8) | (40,012,5) | (71,500,0) |
| <b>Ծրագիրը (ծրագրերը) , որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1136 Ծառայությունների, ծրագրերի համակարգում</b>  |   |  |      |       |       |   |            |            |            |
| <b>Վերջնական արդյունքի նկարագրությունը</b><br>Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրին և շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացում, պետության կողմից բաղադրայիններին մատուցվող ծառայությունների բարելավում, պարզեցում<br>Ծառայություն (ծառայություններ) մատուցողի անվանումը<br><b>ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ</b> |   |  |      |       |       |   |            |            |            |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555Ն ՈՐՈՇՄԱՆ  
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՄԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

| Ծրագրային դասիցը | Գործառնական դասից | Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը  | 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)   |
|------------------|-------------------|--|---|
| ծրագիրը          | միջոցառումը       | (բաժինը/խումբը/ դասը)  | (ցուցանիշների փոփոխությունը<br>ավելացումները նշված են<br>դրական նշանով իսկ<br>նվազեցումները՝ փակագծերում) |
| 1136             | ԱԾ02              | <p>ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ընթացիկ ծախսեր</p> <p>Մատուցվող ծառայության նկարագիրը</p> <p>ՀՀ կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատման, հստակեցման և պարզեցմանն ուղղած աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովում, նոր կարգավորվող օրենսդրական նորմերի ուսումնասիրություն, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծություն և դրանց ազդեցության գնահատում</p> <p>Ծառայություն մատուցողի անվանումը</p> <p>ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ</p> | (71,500,0)  |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 5  
 ՀՀ կառավարության 2016 թվականի  
 մարտի 10-ի N 294 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն  
 ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Կոդը   | Անվանումը        | Գնման ձևը | Չափման<br>միավորը                                 | Միավորի<br>գինը | Քանակը  | Գումարը<br>(հազ. դրամ)   |
|--|------------------|-----------|---|-----------------|---------|--|
|  |                  |           |   |                 |         | Ցուցանիշների<br>փոփոխությունը<br>(ավելացումները<br>նշված են դրական<br>նշանով, իսկ<br>նվազեցումները՝<br>փակագծերով) |
| ՀՀ կառավարության աշխատակազմ  |                  |           |   |                 |         | (11,208.2)   |
| Բաժին N 01   | Խումբ N 01       | Դաս N 01  | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում |                 |         | (11,208.2)   |
| 1. ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի<br>իրականացման գրասենյակի պահպանում |                  |           |   |                 |         | (11,208.2)   |
|  | ՄԱՍ 1. ԱՊՐԱՆՔՆԵՐ |           |   |                 |         | (3,841.0)  |
| 09132100-1   | Բնեղին, պրեմիում | ԾՀ        | լիտր  | 510.0           | 1,440.0 | (734.4)  |

|            |  |    |          |         |         |         |
|------------|--|----|----------|---------|---------|---------|
| 19641000-1 | Պոլիէթիլենային պարկ՝ աղբի համար        | ԸՀ | հատ      | 10.0    | 1,000.0 | (10.0)  |
| 22811150-1 | Նոթատեսորեր                            | ԸՀ | հատ      | 800.0   | 26.0    | (20.8)  |
| 22811180-1 | Օրագրեր և ամենօրյա նշումների տեսորեր   | ԸՀ | հատ      | 3,300.0 | 25.0    | (82.5)  |
| 30192121-1 | Գրիչ՝ գնդիկավոր                        | ԸՀ | հատ      | 100.0   | 50.0    | (5.0)   |
| 30192128-1 | Գրիչ՝ գելային                          | ԸՀ | հատ      | 150.0   | 100.0   | (15.0)  |
| 30192130-1 | Մատիտներ                               | ԸՀ | հատ      | 50.0    | 50.0    | (2.5)   |
| 30192720-1 | Գծանշիչ                                | ԸՀ | հատ      | 250.0   | 50.0    | (12.5)  |
| 30192760-1 | Արիչ՝ սովորական                        | ԸՀ | հատ      | 500.0   | 5.0     | (2.5)   |
| 30197111-1 | Կարիչի մետաղական կապեր,<br>փորք        | ԸՀ | տուփ     | 100.0   | 40.0    | (4.0)   |
| 30197230-1 | Թղթապանակ                              | ԸՀ | հատ      | 800.0   | 50.0    | (40.0)  |
| 30197231-1 | Թղթապանակ, պոլիմերային<br>թաղանթ, ֆայլ | ԸՀ | հատ      | 10.0    | 2,000.0 | (20.0)  |
| 30197234-1 | Թղթապանակ՝ կոշտ կազմով                 | ԸՀ | հատ      | 500.0   | 30.0    | (15.0)  |
| 30197322-1 | Կարիչ՝ 20-50 թերթի համար               | ԸՀ | հատ      | 600.0   | 24.0    | (14.4)  |
| 30197323-1 | Կարիչ՝ 50-ից ավելի թերթի<br>համար      | ԸՀ | հատ      | 1,200.0 | 10.0    | (12.0)  |
| 30197631-1 | Թուղթ, A4 ֆորմատի 1 /21x29.7/          | ԸՀ | կիլոգրամ | 850.0   | 800.0   | (680.0) |
| 30199232-1 | Ծրար՝ մեծ A4 ձևաչափի համար             | ԸՀ | հատ      | 50.0    | 150.0   | (7.5)   |
| 30199420-1 | Թուղթ՝ նշումների համար,<br>սոսնձվածքով | ԸՀ | տուփ     | 300.0   | 68.0    | (20.4)  |

|            |   |    |      |           |          |         |
|------------|---|----|------|-----------|----------|---------|
| 30234400-1 | Դատարկ սկավառակ, առանց սոսիփի, DVD                        | ԸՀ | հատ  | 100.0     | 135.0    | (13.5)  |
| 30237100-1 | Համակարգիչների մասեր                                      | ԸՀ | դրամ | 817,000.0 | 1.0      | (817.0) |
| 31441000-1 | Մարտկոց, AAA տեսակի                                       | ԸՀ | հատ  | 100.0     | 100.0    | (10.0)  |
| 31531210-1 | Էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W                           | ԸՀ | հատ  | 150.0     | 25.0     | (3.8)   |
| 31531220-1 | Էլեկտրական լամպ, 150W                                     | ԸՀ | հատ  | 250.0     | 25.0     | (6.2)   |
| 31685000-1 | Էլեկտրական երկարացման լար                                 | ԸՀ | հատ  | 2,500.0   | 5.0      | (12.5)  |
| 32411130-1 | Համացանց  | ԸՀ | դրամ | 847,000.0 | 1.0      | (847.0) |
| 33761000-1 | Զուգարանի թուղթ՝ ոռունով                                  | ԸՀ | հատ  | 100.0     | 358.0    | (35.8)  |
| 39221120-1 | Սպասք   | ԸՀ | հատ  | 700.0     | 25.0     | (17.5)  |
| 39221160-1 | Խմելու համար նախատեսված բաժակներ                          | ԸՀ | հատ  | 600.0     | 33.0     | (19.8)  |
| 39221350-1 | Մեկանգամյա օգտագործման բաժակներ                           | ԸՀ | հատ  | 8.0       | 10,500.0 | (84.0)  |
| 39221480-1 | Զուգարանի խոզանակներ                                      | ԸՀ | հատ  | 2,500.0   | 4.0      | (10.0)  |
| 39263200-1 | Գրասենյակի գիրք, մատյան, 70-200 էջ, տողանի, սպիտակ կտերով | ԸՀ | հատ  | 800.0     | 6.0      | (4.8)   |
| 39263320-1 | Օրացույց՝ պատի  | ԸՀ | հատ  | 2,500.0   | 6.0      | (15.0)  |
| 39263520-1 | Սեղմակ՝ միջին   | ԸՀ | հատ  | 60.0      | 200.0    | (12.0)  |
| 39514400-1 | Թղթե սրբիչներ՝ ավտոմատ դիսպենսերի                         | ԸՀ | հատ  | 1,000.0   | 148.0    | (148.0) |

|            |  |      |      |             |      |          |
|------------|--|------|------|-------------|------|----------|
| 39522250-1 | Փոշու հավաքման կտորներ                                     | ԸՀ   | հատ  | 700.0       | 8.0  | (5.6)    |
| 39812410-1 | Կահույքի փայլեցման միջոց                                   | ԸՀ   | հատ  | 1,000.0     | 6.0  | (6.0)    |
| 39831100-1 | Լվացող նյութեր   | ԸՀ   | հատ  | 1,200.0     | 8.0  | (9.6)    |
| 39831245-1 | Օճառ՝ հեղուկ   | ԸՀ   | լիտր | 800.0       | 15.0 | (12.0)   |
| 39831273-1 | Հատակի մաքրման նյութեր                                     | ԸՀ   | հատ  | 2,500.0     | 8.0  | (20.0)   |
| 39831276-1 | Զուգարանի մաքրման նյութեր                                  | ԸՀ   | հատ  | 1,200.0     | 12.0 | (14.4)   |
| 39831280-1 | Ապակի մաքրելու միջոց                                       | ԸՀ   | հատ  | 1,000.0     | 10.0 | (10.0)   |
| 39835000-1 | Հատակ մաքրելու ձող,<br>պլաստմասայե, փայտյա                 | ԸՀ   | հատ  | 8,000.0     | 1.0  | (8.0)    |
|            | ՄԱՍ II . ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ                                       |      |      |             |      | (350.0)  |
| 45461100-1 | Շենքերի, շինությունների<br>ընթացիկ նորոգման<br>աշխատանքներ | ԸՀ   | դրամ | 350,000.0   | 1.0  | (350.0)  |
|            | ՄԱՍ III. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ                                   |      |      |             |      | (7017.2) |
| 50111130-1 | Ավտոմեքնաների վերա-<br>նորոգման ծառայություններ            | ԸՀ   | դրամ | 360,000.0   | 1.0  | (360.0)  |
| 64211100-1 | Հանրային հեռախոսային<br>ծառայություններ                    | ԲԸԱՀ | դրամ | 359,000.0   | 1.0  | (359.0)  |
| 64211120-1 | Միջքաղաքային հեռախոսային<br>ծառայություններ                | ԲԸԱՀ | դրամ | 1,000,000.0 | 1.0  | (1000.0) |
| 64211290-1 | Էլեկտրոնային հաղորդագրու-<br>թյունների ծառայություններ     | ԸՀ   | դրամ | 100,000.0   | 1.0  | (100.0)  |
| 65111100-1 | Խմելու ջրի բաշխում   | ԸՀ   | դրամ | 37,200.0    | 1.0  | (37.2)   |

|            |   |      |      |             |     |           |
|------------|---|------|------|-------------|-----|-----------|
| 65311100-1 | Էլեկտրականության բաշխում  | ԲԸԱՀ | դրամ | 2,249,700.0 | 1.0 | (2,249.7) |
| 66511170-1 | Փոխադրամիջոցների հետ<br>կապված ապահովագրական<br>ծառայություններ | ԾՀ   | դրամ | 40,000.0    | 1.0 | (40.0)    |
| 70331700-1 | Կենցաղային ծառայություններ                                      | ԲԸԱՀ | դրամ | 1,890,000.0 | 1.0 | (1,890.0) |
| 72611100-1 | Համակարգչային տեխնիկական<br>օժանդակ ծառայություններ             | ԾՀ   | դրամ | 500,000.0   | 1.0 | (500.0)   |
| 79111200-1 | Ներկայացուցչական<br>ծառայություններ                             | ԾՀ   | դրամ | 481.300.0   | 1.0 | (481.3)   |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ